

Եւ իմ փոքրիկ բիբերըս թու բիբերուդ
 Տեղալ երկինքն անսահման,
 Սըրտես սըրտիդ պարպել բոլոր օրերս այն
 Որ արեւու տակ անցան:
 Մուժ բանտիդ մէջ գարնան վարդերը ամբողջ
 Պիտի լեցնել ուզէի,
 Կամ ճիղմ հասակս ու ապագան հասակիս
 Պիտ՝ հոն թաղել ուզէի:

Ո՛վ տըխուր ժամ: Քեզ մի առ մի պատմեցի
 Սեւ վիպակները մեր տան,
 Հանիիս մահն ու հիւանդ մօրս հազը խուլ
 Լըռութեան մէջ գիշերուան.
 Ըսի թէ մեր տանիքին վրայ, լուսնին տակ,
 Բուերը պար կը բըռնեն,
 Թէ այս տարի մեր վարդենին չորացաւ
 Գերեզմանատան խորշակէն:
 Կը լըսէիր զիս եւ հարցում կ'ընէիր,
 Երբ հըրաման մը վայրի,
 Կոյր հըրաման մ'եկաւ ըզմեզ բաժնելու...
 Դարձա՛ր... առանց համբոյրի...
 Ու ես երկա՛ր ետեւէդ պիշ նայելով,
 Հա՛յր իմ, միևակ, հոն լա՛ցի,
 (Մինչ կուրծքիս տակ բաշ կը թօթուեր ոյս մը նոր)
 Սիրտս աչքերես քամեցի:
 ... Ո՛վ կեանք սիրոյ, լանջ քըրտինքի, սիրտ փուշի,
 Յեխին նետուա՛ծ սըրբութիւն,
 Արեւուն բորբ հոսանքներուն դեմ գոցուած,
 Ո՛վ երակներ ազագուն:
 Տեսայ՝ որ ձեզ հետ, ձեզի հետ սուզեցան
 Եղեռնի մէջ, արտալա՛ծ,